

է : Եւ մսագործի եթէ պախրէի լինի դլուխ եթէ ոչխարի զկէսն տա կէսն ազատ է : Եւ 'ի նստ ո ին կարլէն ո դրամն ազատ է .

Նոր գիտաւորք .

Միլանու աստեղադիտարանէն Պ. Շէրֆիկի հետևեալ ծանօթութիւնքը կը հաղորդէ՝ իր արդէն յուլիսի հին յայտնած դիտաւորին վրայ . որ զգալապէս երկրիս մօտենալով՝ տրամադժին և լուսայն աճումը օրէ օր պիտի պայծառանայ : Քանի մը օրէն առանց գործեաց օգնութեան ալ պիտի տեսնուի երրորդ և չորրորդ կարգի մեծութեամբ աստեղաց, Բազմաստեղաց և Եզրող համաստեղութեան մէջ : Գրեթէ երկու աստիճան երկայնութեամբ կը ձգուի ագին հակառակ արեւու : Պրերայի դիտարանը կը ծանուցանէ և կը հետեցնէ մինչև ցայսօր ըրած հաշիւներէն որ օգոստոսի Տին երկրիս մերձաւոր կէտը պիտի գտնուի , ինը միլիոն մղոն հեռաւորութեամբ : Կոյն օրը պիտի լծորդի արեգական հետ և արագընթաց բոլոր մամբ աւելի անոր պիտի մօտենայ՝ հինգ օրուան մէջ երեք երկայնութեան նշան հատանելով : Արեգական միւս կողմն անցնելով՝ առաջ որ միայն առաւօտեան գէմ տեսանելի էր, պիտի աեսնուի երեկոյեան վերջալուսայննուազմանը միջոց, մինչև ց10 օգոստոսի . 15ին արեգական մերձաւոր կէտը պիտի գտնուի , և անտարակից նէք որ նոյն ժամանակ իր պայծառութիւնն ու աճումը զգալի պիտի առաւելու : Այսպէս շատ մը եօթնեակներ գիշերները արևմտեան կողմը պիտի աեսնուի , և նոյն միջոցին՝ օգոստոսի վերջն ատաներորդ մասը և ամբողջ սեպտեմբեր ամիսը, պիտի անցնի ուղիղ ընթացքով՝ զոդիակոսի Առիւծ, Կոյս և Կշիռ համաստեղութիւնքը, լծորդելով դարձեալ արեգական հետ հոկտեմբերի վերջն օրերը :

Գիտաւորիս պարունակը՝ երկրիս պարունակին շատ մերձաւոր է , անանկ որ սեպտեմբերի 12ին միջոցները գրեթէ եօթն հարիւր հազար մղոն հեռու պիտի մնայ երկրիս յունիսի 15ին իր պարունակին մէջ գտնուած կէտէն : Եթէ ըստ դիտաց երկրիս դանդաղելով իրեք ամիս՝ նոյն կէտը գըտ-

նուելու ըլլար , և կամ գիտաւորը երեք ամիս կան ինելու ըլլար , շատ մեծ և աչեղ պիտի տեսնայինք զննքը և զերկիրս իր ագին մէջը պիտի ընկլմեր :

Ուրիշ գորգիկ գիտաւոր մ'ալ տեսանելի է այս միջոցներս արևմտեան հորիզոնին վրայ . զոր աղէկ դիտակներով ալ անկարելի է նշմարելը , ուստի այն պատճառու առ այժմ դժուարին է իր ապագային գուշակումը :

Վիճակագրական .

Ըստ նորագոյն վիճակագրական գեղեցիկ ու ճշգրիտ հաշուի , զոր հրատարակեր է Գոքըր անգղիացի գիտականնը , Անդղիյ բնակչաց թիւն է 30 միլիոն : Ի բաց առեալ Պելջիս , չկայ աշխարհէք մը Եւրոպից մէջ այսչափ բազմամարդ համեմատութեամբ երկրին ընդարձակութեանը : Ամեն երկու վայրկենին 1 նորմա երեք զաւակ կը ծնանի , և ամեն մէկ վայրկենին մէկ զաւակ կը թաղէ : Մեծն բրիտանիայի ազատ գաղղթողներն են հինգ խոշունացիք առ մէկ Անդղիացի , երեք խոշունացիք առ մէկ Սկովացի : Կանանց թիւը 500000 աւելի է քան երիկ մարդկանցն , որով կանանց թիւը կը համեմատի երիկ մարդկանց թուցն , ինչպէս 105 առ 100 : Անդղիյ բնակչաց շարունակած աճման կինդանի օրինակ մըն է Պըքէնէտա ըսուած քաղաքը , որ յամին 1801 գիւղ մըն էր հարիւր մէկ բնակչօք , իսկ հիմա քաղաք մըն է 81539 բնակչը : Լոնդոնայի հիմակուան բնակչաց թիւը շատ հաւանականութեամբ հաւասար է ծովարուն բոլոր Անդղիայի բնակչաց թուցն : Ամեն վեց վայրկենին այս ծովացեալ քաղաքս մէկ զաւակ կը ծնանի , և ամեն ուկի վայրկենին մէկ զաւակ կը թաղէ : Եթէ Լոնդոնայի բնակչաց թիւն այս համեմատութեամբ շարունակէ աճելու , յամին 1963 տասնըվեց միլիոն բնակիչ պիտի ունենայ : Լոնդոնայի բնակչաց թիւն հինգ անգամ աւելի է

քանՊէոլինին, ՎԵՆՆԱՅՈՒՆ և ԲԵԴՐԱՊՈՒՐԿԻՆ. և 'ի վերայ այսր ամենայնի մեռելոց թիւն համեմատութեամբ նուազ է 1ընտրա քան թէ այս մայրաբազաբաց մէջ:

Յամին 1862 Բարիկ ծներ են 26505 մանչ և 25807 աղջիկ ընդ ամեն 52313 տղայք: Մեռելոց թիւն էր 12183, որով ծնունդք կ'առաւելուն քան մեռեալները 10127 թուով: Ամուսնութեց թիւն էր 15916: Բարիզու քասն թաղերուն (Argon disseminans) բնակչաց թիւն էր ըստ վերջին աշխարհամարին 1 միլիոն 696141 հոգիք:

Մէրսիկոյի Գոնգոնիոյ միջատը.

Մէրսիկոյի Վէրաբրուղ քալքին շրջակայքը միջատ մը կայ որ սաստիկ լսու մը կ'արձեկէ, Սպանիացիք Գոնգոնիոյ (Pyrophorus clarus) կը կոչեն: Այս միջատը Մէրսիկոյի կանայք ընտանի կենդանւոյ մը պէս կը պահէն: Որսալու համար վառած ածուխի կտոր մը կը գործածէն, գաւազանի մը ծայրը հաստատած օդու մէջ խաղնելով: Գոնգոնիոն՝ ինչպէս միջատաց շատը՝ խիստ սրատես է. հեռուանց փալքիլով առարկայն տեսնելով՝ իրեն նախանձորդ մը կը կարծէ, ու սրաթոիչ ընթացքով մը վրան կը յարձի. բայց փորձանքի կու գայ կը բունուի, ինչպէս սովորաբար կ'ըլլայ անոնց որ կիբքէ մը բռնուած են. ինքը իր ազատութիւնը կը կորմնցնէ՝ ուրիշ որս ըլլալով: Վէրաբրուղի վաճառանոցը կը ծախուին՝ տասուեր-

կուքը երկու բնաւի. Վէրաբրուղի աիկնայք զասոնք գնելով գեղեցիկ վանդակներու մէջ կը պահէն, շաքարի եղէգով կը սնուցանեն, և օրը երկու անգամ ջրով կը թրչէն: Այս կերպ բաղնիքի անհրաժեշտ պէտք ունի միջատս. վասն զի այն առատ ցովին տեղ կը բռնէ՝ որ ազատ եղած ժամանակը կը վայելէր, որ և հասարակածին տակը շատ առատ է:

Գիշերը վանդակներէն հանելով իրենց զարդարների առարկայ մը կ'ընեն. մերթ գնդասեղի մը ծայրը անցուցած՝ առանց վնասելու, և երբեմն, որ և գեղեցկադոյն տեսարան մը կ'ըլլայ, ծաղկեայ պատկներու մէջ խառնուած՝ գիսու զարմանալի զարդ մը կ'ըլլայ՝ գոհարներու կերպ կերպ անդրադարձութեամբ: Այս կերպով և որ Մէքսիկոյի աիկնայք կրցեր են ամենագեղեցիկ զարդարանք մը ընել այն միջատը՝ որ բնութիւնը առատապէս իրենց շնորհէր է:

Լրագիր մը Գաղղիոյ Ճեմարանին անձանց տարեքին հաշիւը այսպէս կու տայ.

Ակնէնէ՝ 87 տարուան. Մէկիւր՝ 83. Պարանթ՝ 82. Տիւփիէն՝ 80. Լըպէօն՝ 79. Կիզչ՝ 77. Լամարթին՝ 76. Տը Պըոկի՝ 74. Վ. իլլըմէն՝ 74. Պէսիէ՝ 74. Բոնժէրվիլ՝ 72. Գուզէն՝ 72. Բաթէն՝ 71. Ֆլուրան՝ 70. Մինէն՝ 68. Թիէրս՝ 67. Ռէմիւզ՝ 67. և այլն:

Այս հաշուէս կը տեմնուի որ Գաղղիոյ Ճեմարան պատանեկութեան հասակը 50 տարուան կը սկսի. երիտասարդութիւննին՝ մինչեւ վաթսունէն անդին կը ձգի. կատարեալ հասակը 70 տարուանն է. և եթէ մարդկային կենաց միջին սահմանն է 33 տարին, հրաշալի անձի մը կենաց միջին սահմանը 63 տարին է: